

24(599)
08.09.2020

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

ԼՍՄՄՄՄ

Ճանաչել գիմաստությունն եւ գլխարկ, իմանալ զբանս հանճարոյ

Лусарар ●

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar

ԲԱՐԻ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Դժվար հնչող առաջին զանգ. մեր հիշողության մեջ երկի այս բնորոշմամբ կմնա 2020-2021 ուստարվա մեկնարկը: Համավարակի պատճառով դժվարություններն սկսվեցին ընթացիկ տարվա գարնան սկզբին, երբ COVID-19 կոչված վարակը քակեց նաև հայոց դռները: Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, Արցախում ևս միջոցներ ձեռնարկվեցին քանակներորդ դարի այս նեղ հիվանդության դեմն առնելու համար, որի շրջանակում նախաձեռնվեց հեռավար դասապրոցես կազմակերպելու բարդ գործը: Իսկ բարդությունը հիմնականում կայանում էր նրանում, որ տեխնիկական հնտությունների առումով պատրաստ չէին թե՛ մանկավարժները և թե՛ աշակերտները: Սակայն, խոստովանենք, դժվարությունները միայն սկսվեցին էին, աստիճանաբար հաղթահարվեցին դրանք, և ուսումնական գործընթացը կայուն հունի մեջ ընկավ:

Անշուշտ, անհամադրելի են կենդանի ու առցանց դասուսուցման պայմանները, և ըստ այդմ՝ դասընկալման արդյունքները: Ոչինչ չի կարող փոխարինել ուսուցիչ-աշակերտ առդեմ շփմանը, երբ դպրոցականի համակ ուշադրությունը սևեռված է սիրելի ուսուցչի դեմքին: Նման դեպքերում տեղին է ասել, որ մանկավարժը սովորեցնում է ոչ միայն խոսքով, այլև աչքերով: Միևնույն ժամանակ, պիտի գնահատել առցանց ուսուցման առավելությունները. չէ՞ որ աշխարհը հետևողականորեն զմուռ է դրան, և Արցախը հետ չպիտի մնա կրթական նորարարություններից: Անցած ամիսները փաստել են, որ մենք ունակ ենք ճիշտ ըմբռնել առաջարկված մարտահրավերներն ու ժամանակին համաքայլ ընթանալ:

Մի բան է, սակայն, իրավիճակին պարտադրյալ հարմարվելը, մեկ այլ բան՝ «ժամանակի շունչը դառնալը»: Այո, մենք պարտադրված եղանք ձեռնարկել իրավիճակին համարժեք քայլեր, որոնց ամբողջությամբ չէինք պատրաստ, բայց դա նաև արժեքավոր դաս էր վաղվա անսպասելի մարտահրավերներին դիմագրավելու համար:

Միով բանիվ, նոր ուսումնական սկսված է, և կրթարանների կամարների տակ վերստին հնչում է դասի կանչող դպրոցական աշխույժ զանգը: Ասել է թե՛ կամաց-կամաց վերադառնում ենք նախկին դիմի, թեպետ դրան զմուռ ենք համավարակի վտանգով թելադրված զգուշությամբ ու չնվազող պատասխանատվությամբ: Հանրապետության պարետի որոշումները ճշտությամբ կատարելը խիստ կարևոր է մատաղ սերնդի առողջության պահպանման, ինչպես նաև բազմաազգար աշակերտներին վարակի տարածման աղբյուր դարձնելու ռիսկի առումներով: Ավելորդ չէ հիշեցնել, որ երեխաների դասամիջոցյան ու հետդասյա շփումները դժվար է վերահսկել՝ պայմանավորված նրանց տարիքային էներգիայի անչափելիությամբ, և անշուշտ, դարձյալ շատ բան կախված է մնալու մանկավարժներից: Պետք է կլինի հավելյալ ջանքեր ու նվիրվածություններ դեմքեր, որպեսզի աշակերտները կարողանան առավելագույն գիտելիքներ ստանալ և միաժամանակ անվտանգ մնալ համավարակի բնահանրություններից:

Մենք հավատում ենք մեր ուսուցիչների ներուժին և այդ լավատեսությամբ էլ մաղթում ենք նրանց ու բոլորիս՝ բարի՝ ուսումնական տարի...

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ



Կրթության ոլորտի սիրելի՛ ներկայացուցիչներ
Ընդունեք ջերմագին շնորհավորանքներս Գիտելիքի և դպրության օրվա առթիվ:

Այս տարի այն առանձնահատուկ է նաև նրանով, որ երկարատև հարկադիր պարապուրդի մատնված կրթօջախներում վերստին կողողանցի դպրոցական զանգը: Անցած մի քանի ամիսներին առիթ ունեցանք համոզվելու, որ սերունդների կրթության և դաստիարակության գործում անչափ կարևոր է կենդանի շփումը: Նաև դրանով պայմանավորված՝ կայացվեց դպրոցներում և բուհերում դասապրո-

ցեսը վերակսելու համարձակ որոշումը: Դա մեզ հաջողվել է ծանր ու դժվարին աշխատանքի արդյունքում, սակայն պետք է նշենք, որ ռիսկի աստիճանը շարունակում է բարձր մնալ, և խնդրանք է հետևողականորեն պահպանել սահմանված բոլոր կանոնները:

Ուսումնական տարին նշանավորվում է նաև մեկ այլ կարևոր ձեռքբերմամբ: Կյանքի ենք կոչում իմ դեկավարած քաղաքական դաշինքի առաջ քաշած նախընտրական ծրագրի՝ բուհական կրթությունն անվճար դարձնելու հիմնադրույթը: Սրանով մենք հետապնդում ենք ոչ միայն սոցիալական խնդիր լուծելու նպատակ, այլև տալիս ենք մեկնարկը որակյալ կրթություն ապահովելու և ապագա լավագույն մասնագետներին վերհանելու պետական նոր քաղաքականության:

Զարգացող Արցախի հիմնասյունը վաղվա մրցունակ և գիտելիքահեն սերունդն է, որն այսօր ձևավորման ճանապարհին է՝ դպրոցում և բուհում: Ուրեմն՝ կոչս որպես հորդոր ընդունեք բարեկեցիկ ապագա կերտելու մեր համընդհանուր ջանքերը պետք է յուրաքանչյուրիս անհատական ներդրումի հավաքականությունը դառնան:

Բարի՝ ընթացք և նոր ձեռքբերումներ նոր ուսումնականում:

ԱՇ ԿԳՄ ՆԱԽԱՐԱՐ ԼՈՒՍԻՆԵ ԴԱՐԱՆԱՆՅԱՆԻ ՀՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ



Սիրելի՛ դպրոցականներ, ուսանողներ, ուսուցիչներ, դասախոսներ, ծնողներ

Շնորհավորում են ձեզ սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի և դպրության օրվա առթիվ:

Այսօր համավարակի անմախաղեպ պայմաններում պետք է իրականացնենք ուսումնադաստիարակչական գործընթացը: Եվ մենք հապաղելու, զիջելու իրավունք չունենք, քանի որ ներկա ժամանակներում աշխարհի ամենաթանկ ռեսուրսն ու ամենահզոր զենքը գիտելիքն է, մենք վճռական պետք է լինենք այն ձեռք բերելու հարցում:

Արցախի կրթության, գիտության և մշակույթի նախարարությունը հետևողական է կրթական համակարգի տարբեր մակարդակներում առկա խնդիրները լուծելու գործում: Մենք ամեն ինչ կանենք

մանկապարտեզների, դպրոցների, արվեստի ու երաժշտական դպրոցների, արհեստագործական ուսումնարանների, քոլեջների շենքային պայմաններում ու նյութատեխնիկական հագեցվածությունը բավարարելու համար՝ ի հատույց ակնկալելով գիտելիք ու բարեկարգություն, մնայուն բարձր արժեքների ստեղծում ու փոխանցում:

Ազգակառույց և ազգապահպան գործունեությունը կրթության մենաշնորհն է, կրթության իշխանավորը՝ ուսուցիչը: Մեր գլխավոր խնդիրներից մեկն այսօր կրթական հավասար հնարավորությունների և հավասարաչափ որակի ապահովումն է ամբողջ հանրապետությունում: Ստեղծվող կրթական որակը նույնը պետք է լինի մարաքաղաքի ու սահմանի դպրոցում, և սահմանի դպրոցի աշակերտը ևս պետք է ունենա որակյալ կրթություն ստանալու բոլոր հնարավորությունները:

Այս տարի մենք արդյունք ունեցանք նաև միջազգային օլիմպիադայում, ինչը հավաստում է, որ մեր դպրոցը մրցունակ է և ի գորու համաքայլ ընթանալու աշխարհում զարգացող կրթությանը՝ պահելով ու հանրահռչակելով ազգային ինքնությունն ու արժեհամակարգը:

ԱՇ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

Սեպտեմբերի 2-ին՝ Արցախի Հանրապետության անկախության հռչակման օրը, Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը հանդես է եկել շնորհավորական ուղերձով, որում մասնավորապես ասվում է.

«Սիրելի՛ հայրենակիցներ Շնորհավորում են բոլորիս՝ Արցախի Հանրապետության օրվա առթիվ, շնորհավորում են ողջ հայ ժողովրդին, Հայաստանի, Արցախի և Սփյուռքի մեր բոլոր բույրերին ու եղբայրներին:

Այս կարևորագույն պետական տոնը մենք կերտել ենք միասին՝ ազգովի, համայն հայության ջանքերի համատեղման, մեր հայրենիքի, նախնիների հիշատակի և սերունդների ապագայի հանդեպ ունեցած մեծագույն պատասխանատվության, մեր խիզախության ու տոկունության շնորհիվ: Կերտել ենք՝ մտքում փայփայելով ազատ, անկախ ու երջանիկ երկիր ունենալու երազանքը:

Այսօր մեր ժողովուրդն այդ նվիրական երազանքի իրականացման ճանապարհին է: Համոզված են՝ այն մենք կանցնենք հաջողությամբ, որովհետև կառուցում, շենացնում ու պաշտպանում ենք մեր հայրենի հողը՝ ստեղծելով անհրաժեշտ պայմաններ մեր քաղաքացիների արժանավայել կյանքի համար: Մենք դա կանենք մեր և մեր գոհված ընկերների՝ մեր ժողովրդի հերոս զավակների փոխարեն: Դա բոլորիս սրբազան պարտքն է:

Հավերժ փառք ու պատիվ մեր բոլոր նահատակներին, ում կյանքի զնով իրականություն է դարձել այս պանծալի տոնը:

Կեցցե՛ Արցախի Հանրապետությունը: Կեցցե՛ հայ ժողովուրդը»:

ԹԱԼԻՇԸ՝ ԳՈՅԱԿԵՐՊԻ ՆՇԱՉՈՂ



Գիտելիքի և դպրության օրվա, նոր ուսումնական տարվա մեկնարկի առթիվ շնորհավորանքի իր ուղերձը ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարար Լուսինե Դարախանյանը նախընտրեց հղել սահմանամերձ Թալիշի դպրոցից: «Ինչո՞ւ Թալիշից. որպեսզի մեր ռուսագերում միշտ զգանք սահմանին մոտ գտնվող մարդկանց սրտի տաք տրոփյունը և մեր քայլերը համապատասխանեցնենք դրան, որովհետև թիկունքի մեր գործունեության տրամաբանությունը թելադրում է սահմանը», - ասաց նա:

ՍԵՊՏԵՄԲԵՐՄԵԿՅԱՆ

Նախարարի սյունակ
Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆ
ԱՅ ԿԳՄ նախարար

ՄԵՆԵ ՈՒՐԻՇ ԶԵՎՈՎ
ԱՅԽԱՏԵԼՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔ ԶՈՒՆԵՆՔ



Ընդհանուր անտարբերություն կա աշխարհում: Ամբողջ աշխարհը մի աննկարագրելի վառ-խառնաշփոթի մեջ է, և դա ազդում է մեզ վրա: Եվ տարածաշրջանի վիճակը, և՛ այն, ինչ կատարվում է սահմանին, ուղիղ կապ ունեն

մեզ հետ, բայց մենք պետք է հաղթահարենք այդ բոլոր դժվարությունները: Պատմության ընթացքում, անգամ ամենածանր ժամանակահատվածում ուսուցչությունը երբեք չի հիասթափվել, չի հուսալքվել: Մի պահ գուցե հուսալքվել է, բայց հետո նորից շարունակել է լուսե երազներ փոխանցել սերնդին: Օրերս ընթերցում էի Վահան Տերյանի «Յոգա Յայաստան» հոդվածը, ոնց որ այսօր լինի գրված: Ու տեսեք ինչքան շատ բան է մեզանից յուրաքանչյուրից կախված: Ընդհանուր հասարակության բարոյականության ֆոնը մարդասիրացման գործընթաց է հասարակության բարձրացման համար: Կարճ ասած՝ մեր նվիրումը շատ կարևոր է: Մենք պետք է հետաքրքիր դարձնենք մեր միջավայրը, դարձնենք լավը, որպեսզի ցանկանանք այստեղ ապրել: Այդ արժանապատվության զգացողություններն ուսուցչությունն է արթնացնում սերունդների մոտ, և ես ուզում եմ ամուր բռնեք դրանից: Նոր թափում էինք, և ես մի պահ ամաչեցի առաջին դասարանցուց, որ կենդանի վահան է դարձել և պաշտպանում է ինձ և բոլորին: Մենք ուրիշ ձևով աշխատելու իրավունք չունենք, որովհետև սա ոչ Մադագասկարն է, ոչ Նյու Յորքը, ոչ Ալյասկան: Սա Արցախն է: Արցախ՝ ասել է թե՛ բերդ, խրամատային սահման պահող երկիր: Արցախ՝ նշանակում է մոզական ուժ ունեցող հող: Այդ հողը ինչու է մոզական, որովհետև այնտեղ ոսկի տղաների այրում կա, և այդ այրումը թանկ է դարձրել այս հողը: Ես չեմ հոգում ասել, որ դա շատ թանկ հող է: Եվ համուճ այդ հողի ընկածների պատիվը պետք է բարձր պահել: Նրանք կոնկրետ ազդեցություն են գործում ինձ վրա, իմ գործունեության վրա: Նրանք ինձ ասում են՝ ես գնացել եմ հողը մտել, որ դուք այդ բանն այդպե՞ս անեք: Ու իմ հոգեվիճակն իսկույն փոխվում է: Ես գրուցում եմ նրանց հետ: Զգիտե՛մ՝ ով ինչպես, ես երբ որ հոգնած եմ լինում աշխարհից, ձեռքս եմ առնում Վլադիմիր Բալայանի նկարը, բացում եմ նրա գրքից մի հատված և ընթերցում, Մոնթեի նկարներն եմ նայում... Դա իմ հոգեթերապիան է, ինձ հանգստություն է պատճառում: Ես զոհվածների հայացքներին եմ նայում և ասում՝ կներե՞ք, որ այսպես ծանձրացել եմ, հոգնել եմ, դուք դա արել եք, որ ես ծանձրանա՞մ: Ու լրիվ փոխվում է ներսս: Սեպտեմբերմեկյան իմ ուղեծրում տողեր կան ողջերի և նահատակների մասին: Այդ ողջերի մեջ նաև դուք եք՝ սահման պահող ուսուցիչները: Եվ օգտագործեցի «սահմանպահ ուսուցչություն» արտահայտությունը: Սահմանապահ ուսուցչություն, որը սոսկ գիտելիք չի տալիս աճող սերնդին, այլև ռազմական նշանակության գործ է կատարում: Ես շատ լավ աշխատել եմ ուզում ոչ թե նրա համար, որ փառավորվեմ, այլ որովհետև ես ամաչում եմ ընկածներից, որովհետև անմահները հրամայում են: Ասում են՝ պաշտոնն այդ, որ քեզ եմ տվել, ծառայություն է: Այո, նրանք ինձ հրահանգում են:

2016թ. ապրիլին ադրբեջանական բանակի իրականացրած ռազմական գործողությունները ստիպել էին թափառվել վերստին լքել իրենց ծննդավայրը: Նրանք սկսեցին հարազատ թափառվել վերադառնալ հրթիռահրետակոծություններից ավերակված գյուղի վերականգնումից հետո: Գյուղում արդեն բնակություն է հաստատել 50 ընտանիք՝ 170 բնակչով, իսկ դպրոցում առայժմ սովորում է 27 աշակերտ: Փոքրիկ Նանեն, որը դպրոցի միակ առաջին դասարանցին է, գրեական պիտույքներով լի դպրոցական պայուսակ նվեր ստացավ նախարարից: Դպրոցի բակում կայացած հանդիպմանը ներկա էին ուսուցիչներ, աշակերտներ, համայնքի ղեկավարը: Հավաքվածների մեջ էր բազմազավակ մայր Աննա Դանիելյանը, որը սպասում է իր յոթերորդ զավակին: Առաջին դասարանցի Նանեն նրա հինգերորդ դպրոցական երեխան է, իսկ կրտսերը սպասում է մանկապարտեզի բացվելուն: «Թափառված գրքային հայրենասիրության կարիք չկա: Այստեղ հայրենասիրությունն այլևս կենսակերպ է: Այստեղ հայրենասիրությունն սկսվում է «բարի լույս»-ից մինչև «բարի երեկո», և իր գործով հերոսանում է յուրաքանչյուրը», - ասաց նախարարը: Լ. Ղարախանյանն այնուհետև ներկայացրեց նախարարության որդեգրած կրթական քաղաքականության մի քանի սկզբունքներ. հետևողական եմ լինելու ինչպես դպրոցաշինության, այնպես էլ կրթության տարակարգության ֆորմալ և ոչ ֆորմալ ծրագրերի իրականացման գործում: Կվալի ապակենտրոնացման քաղաքականություն, հավասարության նշան պետք է դրվի բոլոր դպրոցների աշակերտների միջև: Սահմանի աշակերտը պետք է ունենա նույն հնարավորությունները, ինչ որ ունի մայրաքաղաքի դպրոցականը: «Այդ հավասարության նշանն է, որ ստեղծում է արժանապատվության զգացողություն», - ասաց նախարարը՝ ընդգծելով, որ ԿԳՄ-ն հետևողական է լինելու կրթության որակը մատչելի դարձնելու նաև սահմանային գյուղի դպրոցի համար: «Ներկա ժամանակում ամենաթանկ ռեսուրսը և ամենահզոր գեները գիտելիքն է, և մենք պետք է նախանձախնդրորեն անենք ամեն բան այդ գիտելիքը ձեռք բերելու համար: Մեր գլխավոր խնդիրներից մեկն այսօր կրթու-

ԹԱՒԻՇԸ՝ ԳՈՅԱԿԵՐՊԻ ՆՇԱՉՈՂ

թյան հավասար հնարավորությունների ապահովումն է ամբողջ հանրապետությունում»: Կրթական դաշտում մրցունակ լինելը պահանջում է ինտեգրում համաշխարհային քաղաքակրթական արժեքներին, սա-

հուզող խնդիրները՝ Ղարախանյանը խոստացավ, որ նախարարությունն առանձնահատուկ վերաբերմունք է ցուցաբերելու թափառվելու նկատմամբ: Այդ խնդիրներից է, մասնավորապես, մանկապարտեզի բացումը. այսօր 12 նախադպրոցական երեխա սպասում է դրան: Շենքը պատրաստ է, խանգարող միակ հանգամանքը դաստիարակի պակասն է: Դպրոցում նաև ջրի խնդիր կա: Անհրաժեշտ են ջրի կուտակման տարաներ սահմանգույցների մոտ՝ գործարկման համար: Դպրոցը կառուցած շինարարական կազմակերպությունը պետք է վերացնի անորակ շինարարության հետքերը, որովհետև տեղ-տեղ արդեն փլուզումներ կան: Կրթօջախի տնօրեն Տանյա Մեծունցն ասաց, որ թափառվելու երեխաները շատ են սիրում երգել-պարել և կցանկանային, որ պարուսույցներ գալին իրենց մոտ:



Լ. Ղարախանյանը խոստացավ այդ հարցերը շուտափույթ կարգավորել: Մասնավորապես, նրա խոսքով, «Կարին» ավանդական երգի-պարի համույթի անդամները որոշ ժամանակով կիրավիրվեն թափառվելու, որպեսզի մասնագետ վերապատրաստեն: Ի դեպ, թափառվելու դպրոցն անցած ուստարում հպարտանալու արժանի արդյունքներ է արձանագրել: Ութերորդի աշակերտուհին ՆԶՊ և ՅԵՊ առարկաներից մասնակցելով հանրապետական օլիմպիադային՝ գրավել է երկրորդ տեղը: Դպրոցի միակ շրջանավարտ բարձր միավորով ընդունվել է ԱրՊՀ «Ֆինանսներ» բաժինը:


կայն պետք է ամուր պահենք ու հանրահռչակենք մեր ինքնությունն ու արժեքային համակարգը, մեր հոգեմտավոր ժառանգությունը, որպեսզի չհամախաթեցվենք և կարողանանք պահել մեր դիմագիծը, մշեց նախարարը: Նա իր երախտագիտությունը հայտնեց սահմանում ապրող և աշխատող ուսուցիչներին, որոնք մատաղ սերնդին կրթելուց, նրանց լուսե երազանքներ փոխանցելուց զատ՝ նաև գաղափարական առաջնորդի դեր են ստանձնել տարածքում: «Դուք բոլորը կենդանի վահան եք, անգամ՝ փոքրիկ Նանեն, որը ստիպում է մեզ անշեղ լինել մեր նպատակների մեջ: Դուք վարքի կանոններ եք թելադրում մեզ: Մեր հայրենիքի և նրա լուսավոր ապագայի սահմանը սկսվում է այստեղից և ավարտվում ողջերի, հերոսաբար ընկածների և սահմանը պահող տղաների անխոս պատգամներով», - ասաց կրթական գերատեսչության ղեկավարը: Ուշադիր լսելով ներկաներին

Լ. Ղարախանյանը ոգևորված էր թափառվելու հետ հանդիպումից. «Ձեր վարք ու բարքով դուք մշածող եք ինձ համար. ես հայացքով քնելու եմ դեպի թափառվել և արթնանալու եմ դեպի թափառվելու սահմանային գյուղերի դպրոցներ»: ԿԳՄ նախարարի հետ թափառվելու շրջանակների շրջադարձակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Դավիթ Լալայանը շնորհավորեց ներկաներին Գիտելիքի և դպրության ու Արցախի Հանրապետության հռչակման հերթական տարեդարձի առթիվ. «Իրոք, անկախությունը բարձրագույն արժեք է արժանապատիվ ապրելու համար, ազգի ներուժը բացահայտելու, ստեղծագործելու, արարելու համար կարևոր նախապայման»:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՏԱԳԻՍԻ ԴՊՐՈՅՈՒՄ

Ուսումնական տարվա առաջին օրը ԱՅ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանը Մարտակերտի շրջադարձակազմի ԿՄ բաժնի վարիչ Դավիթ Լալայանի ուղեկցությամբ այցելեց Մատաղիսի միջնակարգ դպրոց և տեղում շնորհավորեց սահմանամերձ այս գյուղի դպրոցի կուլեկտիվին: Տոնականորեն զարդարված կրթօջախը մինչ այդ օրվան հարիր արարողակարգով ընդունել էր վեց առաջին դասարանցիներին: Կուլեկտիվում տիրող ջերմ մթնոլորտը, բարձր պատասխանատվությունը առիթ դարձան հետաքրքիր զրույցի թեմայի: «Եթե



կուլեկտիվը լավն է, ուրեմն այնտեղ կա խմբային մշակույթ, ուրեմն այնտեղ մեծ է էտալոնային՝ չափանմուշային անձանց թիվը: Չափանմուշային մարդ՝ մշակակում է և՛ պրոֆեսիոնալ մակարդակով է լավ, և՛ անձնային որակներով», - ասաց նախարարը: Նա տեղեկացրեց մի շարք ձեռնարկների մասին, որոնք ուղղված են ուսուցիչների աշխատանքի գնահատմանը, նրանց խրախուսմանը՝ մշելով, որ նպատակավոր բոլոր պայմանները ստեղծված են, որ նրանք երևելի դառնան: Իսկ երևելի դառնում են վերջնարդյունքով: «Այժմ նախարարության նշածողը աշխարհի հետ համաքայլ ընթանալու սկզբունքն է», - ասաց Լ. Ղարախանյանը:

Դպրոցի տնօրեն Գեղամ Աղաջանյանը վստահեցրեց, որ դպրոցի առողջ կուլեկտիվն ի գործու է կատարելու իրեն վստահված գաղափարական բանակի բարձր դերը և նոր ոգևորությամբ կլծվի իր առաքելությանը:

Սեփ. լրատվություն

ՆՈՐ ՈՒՍԱՐԻ

ՄԵԿՆԱՐԿԵՑ 2020-2021 ՈՒՍԱՐԻՆ

2020-2021 ուստարում Քաշաթաղի շրջանի 52 հանրակրթական դպրոցներում ընդհանուր սովորելու է 2152 աշակերտ, որից 240-ը՝ 1-ին դասարանում, 111-ը՝ 12-րդ, 173-ը՝ 9-րդ: Գիտելիքի և դպրության օրվա առթիվ շրջանի կրթական համակարգի աշխատողներին, աշակերտներին ու ծնողներին շնորհավորական ուղերթ է հղել շրջվարչակազմի ղեկավարի պաշտոնակատար Մուշեղ Ալավերդյանը: Օրերս Բերձորում գրանցվեց կորոնավիրուսով վարակի դեպք, և, կապված համաճարակի տարածումը կանխարգելելու հետ, Բերձորի և մոտակա բնակավայրերի հանրակրթական դպրոցներում աշակերտներին ընդունելությունը հետաձգվել է: Շրջվարչակազմի աշխատակազմի 4Ս բաժնից տեղեկացրին, որ մնացած համայնքների դպրոցներում ընդունել են առաջին դասարանցիներին: Օրվա ընթացքում կապ հաստատեցինք շրջանի մի քանի դպրոցների հետ:

շարքերում: Կովսականի քաղաքային համայնքի ղեկավար Սուրեն Քարամյանը տեղեկացրեց, որ դուստրը՝ Լիլիթը, նույնպես դարձավ դպրոցական:

Չալուա գետի ծախսերի արտասանեցին բանաստեղծություններ դպրոցի և առաջին զանգի մասին: Ներկաներին ողջունեց դասավար Ն. Շիրինյանը: Նա շնորհավորանքի խոսք ուղղեց առաջին դասարանցիներին, որոնց մեջ է նաև որդին՝ Ռուդիկ Մելիքյանը: «Իմ մայրական օրհնանքը բոլոր փոքրիկներին: Թող մեծանան կապույտ երկնքի տակ, լինեն հաջողակ և տերը մեր ազատագրված ու շենացող հայրենիքի»: 12-րդ դասարանցիները փոքրիկ հուշանվերներ հանձնեցին իրենց կրտսեր ընկերներին:

Շրջանի առաջին կրթօջախներից է հյուսիսային քեֆի՝ Շալուա գետի ծախսերի արտասանեցին բարձրադիր վայրում գտնվող պատմական Արտաշատի գյուղի Լեոնիդ Ազալդյանի անվան դպրոցը, որը երկար տարիներ տնօրինել է երջանակահիշատակ Կոլոնյա Յարոթյունյանը: Այժմ դպրոցում սովորում է 34 աշակերտ, որից 4-ը՝ առաջին դասարանում: Տնօրեն Վերա Խաչատրյանը տեղեկացրեց, որ դպրոցում աշխատում է 14 ուսուցիչ: Առաջին դասարանի դասավարն է Գայանե Կիրակոսյանը: Աշակերտների մի մասը դպրոց է հաճախում հարևան Նորաշենիկ գյուղից:

Արաքսամերձ Միջնավան քաղաքի Գալինա Ստարոկոյտովայի անվան միջնակարգ դպրոցում 2020-2021 ուստարում առաջին դասարան է ընդունվել չորս աշակերտ, որոնց դպրոց են ուղևորել նրանց ծնողները: Դպրոցի մուտքի մոտ մանկական ուրախ և տրամադրող երաժշտության ներքո աշակերտներին դիմավորել են դպրոցի տնօրեն Նաիրա Ավետիսյանը, առաջին դասարանի դասավար Յերմինե Գեմիրձյանը և մյուս ուսուցիչները: Նորեկներին շնորհավորական խոսք են հղել դպրոցի տնօրենը, դասավարը, քաղաքային համայնքի ղեկավար Լյուդա Ավետիսյանը: Աշակերտներին առաջին զանգի ներքո դասավարն ուղևորել է դասարան:

Գեմիրձյանը աշակերտներին համար սեղանների վրա գեղեցիկ փաթեթավորված ամանակակա նվեր-անակակա տր պատրաստել: Փոքրիկները նվերներ են ստացել նաև համայնքապետից: Դպրոցից տեղեկացրին, որ աշակերտները ոգևորված էին, դասավարի միջնորդությամբ արտասանեցին իրենց իմացած ոտանավորները: Օրվա առթիվ Արշակ Պողոսյանը, որ դպրոցում աշխատանքի է ընդունվել «Դասավանդիչ, Յայաստան» ծրագրով, դպրոցի գրադարանին նվիրեց մի շարք մեթոդական և ուսումնական ձեռնարկներ, գեղարվեստական գրքեր: Նախկին ուսուցչուհի Լիանա Կահալյանը, որը նույնպես դպրոցում աշխատում էր «Դասավանդիչ, Յայաստան» ծրագրով, դպրոցին նվիրեց մանկական, գեղարվեստական գրքեր, իսկ 1-ին դասարանի աշակերտներին՝ հեքիաթի գրքեր:

Պատմական Միրիկ գյուղը գտնվում է Աղավնո գետի աջակողմյան բարձրադիր ձորակներից մեկում, ունի 17-րդ դարի եկեղեցի՝ Սուրբ Աստվածածինը: Իսկ եկեղեցու արևմտյան բարձր բլրի վրա պահպանվել են 3000-ամյա ամրոցի ավերակներ, դամբարաններ: Օտար լեզվի ուսուցիչ Կարեն-Էդգար Բալայանը տեղեկացրեց. «Ես էլ եմ շնորհավորել Գիտելիքի ու դպրության տոնի առթիվ: Միրիկի՝ Նաիրա Սարգսյանի տնօրինությամբ գործող դպրոցն ունի 36 աշակերտ. 5-ը՝ առաջին դասարանից (դասուցի՝ Անուշ Յարոթյունյան): 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններ չունենք, միջին դպրոց է առայժմ: Ուսուցչական կազմը՝ 12 հոգի: Դպրոցն այս տարի հիմնանորոգվել է «Յայրենասեր» հասարակական կազմակերպության և սփյուռքում ապրող մեր հայրենակից բարերարների միջոցներով: Ունենք արդի դպրոց ժամանակակից բոլոր չափանիշներով: Շատ քիչ աշխատանք է մնացել կատարելու՝ նախնական նախագիծը վերջնական տեսքի բերելու համար: Այսօր առաջին դասարանցիներն առաջին անգամ ոտք դրեցին նորակառուց կրթօջախ, ծանոթացան իրենց դասավարի և դասասանյակի հետ: Անկախ համաշխարհային համավարակի գոյությունից, փոքրիկների տոնը կարելի է համարել կայացած»:

Զոհրաբ ԸՆԹՈՍԱՆ

Չոչանցի ավագանի Սոնասարի գյուղական համայնքի ակունքավար Օլյա Կարապետյանը տեղեկացրեց, որ Սամսոն Կյուրեղյանի անվան միջնակարգ դպրոցն իր դռները բացեց չորս առաջին դասարանցիների առջև: Նրանց մեծ սիրով և ոգևորությամբ դիմավորեց երկարամյա փորձ ունեցող դասավար Նաիրա Մնացականյանը: Չնչեցին Գիտելիքի օրվա նվիրված ողջույնի խոսքեր և բարեմաղթանքներ: Վերջում առաջին դասարանցիներին նվերներ հանձնեց համայնքի ղեկավար Անդրանիկ Կյուրեղյանը, որը, շնորհավորելով երեխաներին, մտաբեց երջանիկ մանկություն, խաղաղ երկինք, հաջողություններ ուսման մեջ:



հռչակման օրվա առթիվ՝ տնօրեն Անահիտ Յովհաննիսյանը կարևորեց հատկապես այն, որ ունեն աշակերտների աճ: Այս տարի դպրոց է հաճախելու 53 աշակերտ, որոնցից 4-ը՝ առաջին դասարան: Մեկ աշակերտ հաճախելու է Բերդիկ գյուղից: Դպրոցի փորձառու դասավար Ծովինար Խոջայանն ընդունեց իր սաներին: Ուրախ էին բոլորը: Առաջին դասարանի աշակերտները ծաղիկներ խոնարհեցին հերոս Մ. Ստեփանյանի նկարի առջև, նվերներ ստացան հերոսի ծնողների և «Յայրենասեր» կազմակերպության կողմից:

Որոտանի ավանդած Յայկազյանի գյուղական համայնքի Յայկազ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցն արդեն երկրորդ տարին է՝ գործում է նորակառույց լուսավոր ու գեղեցիկ եռահարկ շենքում: Այստեղ են կրթություն ստանում նաև հարևան Որոտանի քաղաքային համայնքի դպրոցականները: Այս ուստարում դպրոցն ունի 130 աշակերտ: Առաջին դասարանի դասավար Նելլի Շիրինյանի դասարան հաճախելու է 11 հոգի, որից 9-ը գալիս են Որոտան քաղաքից: Դպրոցի տնօրեն Գևորգ Մարտիրոսյանը ողջունեց ներկաներին: Երեխաները մի փոքր շփոթված էին, ծնողները՝ հուզված: Միջոցառումն անցավ շատ հետաքրքիր,

ԲԱՐԻ ԳԱՆՈՒՍ, ԴՊՐՈՂՆԻ, ԲԱՐԻ ԳԱՆՈՒՍ, ՆՈՐ ԿՅԱՆԵ

Յուրաքանչյուր մարդու հիշողության մեջ սեպտեմբերի 1-ն ունի յուրահատուկ նշանակություն և առանձնահատուկ ձևով հիշվում է ամբողջ կյանքի ընթացքում: Մանկապարտեզներում վարվեցողության ու կարգապահության կանոնները սերտած փոքրիկները, մայրիկների ձեռքից ամուր բռնած, փոքր-ինչ վախվորած հայացքով, ծաղիկներով ու փուչիկներով ոտք դրեցին դպրոցի շենքին:



Մարտունու Մեսրոպ Մաշտոցի անվան հ. 2 հիմնական դպրոցի դռները բացվեցին 48 առաջին դասարանցիների առաջ, որոնց դիմավորեցին դասավարներ Լիլիթ Ասրյանը և Սուսաննա Առստամյանը: Օրվա նվիրված՝ կազմակերպվել էր տոնական միջոցառում, որին ներկա էին շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Զորիկ Դուլյանը, ուսուցիչներ, ծնողներ: Զ. Դուլյանը նոր ուսումնական տարվա մեկնարկի և Գիտելիքի օրվա կապակցությամբ շնորհավորեց ներկաներին և ներկայացրեց շրջվարչակազմի ղեկավար Արարատ Մելքունյանի շնորհավորական ուղերձը:

«Կրթական համակարգը հասարակության և պետության հենարանն է, և վերջինիս կայացումը Արաքսի Յարոթյունյանի օրակարգի հիմնախնդիրներից մեկն է: Այժմ կառավարությունը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում կրթական ոլորտի կատարելագործումը և շարունակական բարեփոխումները՝ առաջնահերթ համարելով գիտելիքներով զինված, կրթված հասարակություն ունենալու անհրաժեշտությունը»,- մասնավորապես ասված է ուղերձում:

Շնորհավորական ելույթներով հանդես եկան կրթօջախի տնօրեն Միրան Ջիվանյանը և դասավար Սուսաննա Առստամյանը:

Յուրահատուկ երդման էին նման օրվա հերոսների ելույթները: Խոստացան լինել պարտաճանաչ ու աշխատասեր: Իսկ ծնողների և ուսուցիչները մարդկային ցանկությունը մեկն էր՝ երեխաները կարևորեն գիտելիքի ուժը, սովորեն անտրտունը և դառնան արժանավոր քաղաքացիներ:

Տոնական միջոցառման ավարտին հնչեց առաջին զանգը, և տրվեց առաջին դասի մեկնարկը:

Թող այս ուսումնական տարին բերի նոր ժպիտներ, իսկ կյանքի նոր փուլ մտնող երեխաների մեջ արթնացնի ձգտում դեպի գիտություն:

Չալվեյնք, որ սեպտեմբերի 1-ին շրջանի 35 հանրակրթական դպրոցներ են հաճախել 324 առաջին դասարանցիներ: Սեպտեմբերի 14-ից ուսումնական տարին կսկսվի մյուս դասարանների աշակերտների համար: Ուսումնական գործընթացը կկազմակերպվի պարտեզի ցուցումներին համապատասխան: Չորրորդ և ավելի աշակերտ ունեցող շրջանի 8 դպրոցում ուսումնական գործընթացը կկազմակերպվի երկիերթ ռեժիմով:

Անուշ ԱՍՐԻԲԱՍՅԱՆ

ՆՎԵՐՆԵՐ ԲԱՐԵԳՈՐԾԻՉ



Սպորտի բաժնի վարիչ Կարոյանը փոքրիկ դպրոցականների համար ուսումնական նման մեկնարկ ակախովելու համար, ինչպես նաև ԱՅ ԿԳՄ նախարար Լուսինե Դարախանյանին, որն ուղղորդել է բարերարին՝ Շահումյանի շրջանի երեխաներին օգնություն ցուցաբերելու: Բոլոր դպրոցներում, որտեղ կայացավ նվերները երեխաներին հանձնելու արարողություն, մանկավարժներն իրենց երախտագիտությունը հայտնեցին բարերարին՝ վստահեցնելով, որ նրան կպատասխանեն ուսման բարձր առաջադիմությամբ:

Սեֆ. լրատվություն



ՎԱՆՈՒՅԻՆ

ԹԵՄԱՆ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը Արամ Հարությունյանի նախագահությամբ սեպտեմբերի 3-ին հրավիրել է քննարկուն «Կրթության նոր չափորոշիչները» թեմայով:

Քննարկմանը թեմայի վերաբերյալ բանախոսությամբ հանդես է եկել ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Սոֆիա Հովսեփյանը: Վերջինս ներկայացրել է կրթության նոր չափորոշիչների աշխատանքային փաթեթը՝ նշելով, որ առաջարկվող չափորոշիչների հիմքում ազգային ռազմավարական ծրագիրն է: «Չեմ փաստի, որ ծրագիրը և չափորոշիչը բացարձակ համաձայնեցված են միմյանց հետ. իհարկե, կա խտտան, ինչը նորմալ է, քանի որ մենք չենք կարող բոլոր խնդիրներն ամբողջական տեսնել և հավաքագրել»,- նշել է Սոֆիա Հովսեփյանը:



Ներկաները հանդես են եկել ելույթներով, առաջարկել չափորոշիչներին և կրթության ոլորտում առկա հիմնախնդիրներին վերաբերող հարցեր և ներկայացրել առաջարկություններ:

Քննարկմանը պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել երկու խորհրդարանների մշտական հանձնաժողովների մասնակցությամբ հանդիպումները, ինչը թույլ կտա հետագայում ընդունել ավելի համընդգրկուն որոշումներ:

Քննարկմանը մասնակցել են ԱԺ խմբակցությունները, ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարության պատասխանատուներ, Ստեփանակերտի դպրոցների ներկայացուցիչներ և շահագրգիռ այլ անձինք:

ԱՀ ԱԺ լրատվություն

ԲԱՆԱԿԵՃ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Առարկայական նոր չափորոշիչները լայն արծագանք են գտել հանրության շրջանում: Սոցցանցերը հեղեղված են մասնագետների և ոչ մասնագետների կարծիքներով, առաջարկություններով: ԱՀ ուսուցիչների վերապատրաստման «ՆորԱրար» հասարակական կազմակերպությունը հիմնադրել են Ստեփանակերտի Վ. Ջահանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի հայրը Լեզվի և գրականության ուսուցչուհի Մանուշ Բալայանը, պատմության և հասարակագիտության ուսուցչուհի Լորենտա Աբրահամյանը և մաթեմատիկայի ուսուցիչ Արայիկ Պետրոսյանը: Կազմակերպությունը նախաձեռնել է նոր չափորոշիչների վերաբերյալ բանավեճ-քննարկում, որին մասնակցել են ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանը, հ. 11 դպրոցի տնօրեն Արիս Գրիգորյանը, փոխտնօրեն Գեղամուշ Գյազուհյուհի, նույն դպրոցի հայրը Լեզվի և գրականության ուսուցչուհի Արմենուհի Խանումյանը, Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանը, Խ. Արովյանի անվան հ. 1 դպրոցի հայրը Լեզվի և գրականության ուսուցչուհի Ալինա Բաղդասարյանը, հ. 11 դպրոցի ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ:

գիտելիք արժեք չունի, եթե գործնականում չենք կարողանում կիրառել:

Արմենուհի ԽԱՆՈՒՄՅԱՆ.

Մենք սպասում էինք բարեփոխումների, բայց ոչ նման: Մի՞թե դա ռազմավարություն և բարեփոխում է, դա արմատական փոփոխություն է, որից կտուժեն հայագիտական առարկաները: Նոր չափորոշիչները և առաջարկվող ծրագիրը մեզ հեռացնում են հայագիտությունից ու ազգայինից: Սա է ամենավտանգավորը: Ինձ այդպես է թվում. չէ՞ որ հայ գրականության նպատակը ազգային սերունդի մեջ հայրենասիրության սերմանումն է, ազգասիրությունն է: Ինչո՞ւ պետք է ռուսը շովինիստ լինի, գերմանացին հայտարարի, թե կապույտ արյուն ունի, և իրենք պիտի տիրեն աշխարհին, բայց հայը հեշտությամբ հրաժարվի ունեցածից: Այդ էլ այն դեպքում, երբ աշխարհաստեղծման օրից հայ ազգը կա, բայց հետագայում ծնված ազգերն ուզում են աշխարհին ինչ-որ բան թելադրել, և հայը պետք է դառնա նրանց կամակատար: Մեր ազգային գաղափարը, մեր մտածելակերպը, դարերից եկած մեր ավանդույթները թողնում ենք մի կողմ և ուզում ենք ներմուծել նորը: Մեր դպրոցը կարծես դարձել է հարմարվող, մեզ ինչ թելադրում են, կատարում ենք: Երբեք հաշվի չեն առնում դպրոցի, ուսուցչական կոլեկտիվի, ինչու չէ, աշակերտների ու ծնողների կարծիքը:

Ալինա ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ.

Ես այն տպավորությունն ունեմ, որ նպատակը քառասյին վիճակի ստեղծումն էր, որովհետև չափորոշիչները հանրությանը ներկայացնելու ժամանակահատվածը սխալ էր ընտրված. ուսուցիչների մեծ մասը դրանցից ուղղակի անտեղյակ էր, որովհետև մարտ ամսից սկսած մինչև արձակուրդ, հատկապես նրանք, որ Zoom-ով են աշխատել, հոգնել էին համակարգից, ու ամռան այդ մեկ ամսին, որ ուսուցիչները պետք է մի քիչ լիցքաթափվեն, պատրաստվեն ծանր ուսումնական տարվան, որ սպասվում է իրենց՝ հաշվի առնելով համաճարակային այս իրավիճակը, մեկ էլ ստացանք նախագիծը: Ճիշտն ասած, աչքերիս չէի հավատում, երբ ծանոթացա գրականության առարկայական չափորոշիչներին: Այդ մասին առիթ են ունեցել ասելու. ինչպե՞ս կարելի էր Ոսկեդարը, Միջնադարը հանել ավագ դպրոցի ծրագրից, 9-րդից էլ են հանել: Փաստորեն ուսուցչության ընթացության արդյունքում եղավ, որ դրանք վերադարձրինք 9-րդ դասարան: Լինելով հիմնական դպրոցի ուսուցիչ՝ տեսնում եմ, որ գլխավորապես տուժում է հենց ավագ դպրոցի հայ գրականությունը, որովհետև հիմնական դպրոցում ծրագրային նյութը հիմնականում պահպանվել է, բողոքից հետո որոշ հեղինակներ վերադարձվել են: Աշխատանքային խմբում պատահական մարդիկ չկան, մեկ-երկուսին ճանաչում ենք, բոլորն էլ նույն մեխի են խփում ու են գլխից գիտեն ինչ նպատակ են իրականացնում:

Ողջունելով քննարկման մասնակիցներին՝ միջոցառման նախաձեռնող՝ «ՆորԱրար» ՀԿ համահիմնադիր Մանուշ Բալայանն ասաց. «Վերջին ամիսներին հանրային հնչողություն ստացած «Հանրակրթական պետական չափորոշիչների ընդհանուր դրույթների հայեցակարգը» վերաբերել է մեր անցած ճանապարհը ու կարծես ի ցույց դրել բացթողումներ, որոնք իսկապես պետք է փոխվեն: Այս ամենը մասնավոր կրթության ոլորտի աշխատողների ստիպում է լրջորեն մոտենալ նախատեսված փոփոխություններին և տալ համարժեք գնահատական: Կարծում ենք՝ պահը հասունացել է ուսուցչական համայնքների ոչ միայն ստեղծման, այլև նրանց ակտիվ գործունեության համար, որի խթանումը ԱՀ ուսուցիչների վերապատրաստման «ՆորԱրար» ՀԿ առանցքային նպատակներից է»:

Քննարկումն անցավ կազմակերպիչների առաջարկած հարցերի շուրջ մասնակիցների կարծիքների լսումով: «Ինչքանով է բարեփոխումների անհրաժեշտությունը համահունչ ժամանակի պահանջներին, և համապատասխանում է, արդյոք, հայեցակարգը հանրակրթության նպատակներին» հարցին հետևյալ պատասխանները հնչեցին:

Յուրի ՔԱՐԱՄՅԱՆ.

Միանգամից ասեմ, որ ես մշակված հայեցակարգ չեմ տեսել, բացի վերջին՝ 1998թ. կրթության հայեցակարգից: Գլխավոր խնդիրներից մեկն այն է, որ չմշակելով կրթության պետական հայեցակարգը, միանգամից անցնում ենք առարկայական չափորոշիչների քննարկմանը: Ընդհանրապես ի՞նչ ենք ուզում, երբ միմյանցից կտրված են բոլոր օղակները՝ նախադպրոցական, հանրակրթական, բուհական, հետբուհական: Դրանք մենք տարանջատում ենք: Ասում ենք՝ տարրական դպրոց, հիմնական դպրոց, ավագ դպրոց և կրթության մյուս աստիճանները: Բոլորը տարբեր խնդիրներ ունեն, տարբեր չափորոշիչներ: Եվ «Նախադպրոցական կրթության մասին», «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքներն էլ չպետք է տարանջատենք: Մենք պետք է Հայեցակարգ ունենանք, այնուհետև իմանանք վերջնարդյունքում ինչ ենք ուզում, ինչ արտադրանք, ապա մշակենք չափորոշիչները: Այսպիսի հասկացություն կա՝ «չմշակած պրոդուկտ»: Չափորոշիչները չմշակած՝ դրել են քննարկման: Դա է մեր պրոբլեմը: Մենք հիմնվում ենք հիմնականում Յան Կոմենսկու տեսության վրա, ըստ որի՝ ուսուցման գլխավոր առանցքը դասժաման է: Մենք դա վերցնում ենք լրիվությամբ և ուզում ենք հարմարեցնել նոր պայմաններին: Մտածենք. կարող է հիմքն է սխալ, բոլորն այդ հիմքի վրա ենք դնում, դրա համար են մշտապես այդ պրոբլեմներն առաջանում: Այդ պատճառով ինչքան բարեփոխումներ են լինում, կանգնում ենք նույն խնդիրների առաջ: Բացի դրանից (այդ մասին ես առիթ ունեցել եմ ասելու «Լուսարար»-ին), մենք

վերցնում ենք տարբեր պետությունների օրինակը, բայց նրանց պրոբլեմները չենք վերցնում: Հիմնականում վերցնում ենք դրանք լավ կողմը, բայց հետագայում գալիս ենք այդ պրոբլեմների առաջ կանգնում: Ինչպես ավագ դպրոցի դեպքում է. գաղափարը վերցրել ենք, բայց սխալ ենք իրականացնում: Նույնն էլ թեստաբանության դեպքում: Նոր, լավ գաղափար մտցնում ենք, բայց իրագործման ժամանակ գորոյացնում: Հիմա միանգամից վերցնում ու փոխում ենք առարկայական չափորոշիչները: Հիմնականում «Հայրը Լեզվի և գրականության», «Պատմություն» առարկաների չափորոշիչներն են աղմուկի առիթը: Ինչո՞ւ: Գուցե սխալ հիմքի վրա ենք դնում դա՝ չիմանալով, թե ինչ ենք ուզում վերցնել: Պետք է մեկ միասնական համակարգ լինի, ուսուցման գործընթացը չտարանջատենք՝ սկսած նախադպրոցականից մինչև վերջին աստիճանը՝ մասնագետ դառնալը: Չկա համակարգի միասնական մայելու ձևը. ամեն մեկը դեպի իրեն է քաշում, իր մասին է մտածում և սկսում տարբեր չափորոշիչներ մտցնել: Չպետք է այդպես լինի: Դա է մեր խնդիրը: Բայց ասեմ, որ փոփոխությունների պահանջ կա, կրթահամակարգը գործող մարմին է, և չպիտի մի տեղում կանգնած լինի: Ընդհանրապես կազմակերպչական աշխատանքում սխալ մոտեցում է եղել: Մի քանի ամսում չափորոշիչներ ներկայացնելը անհնար է: Չափորոշիչները ոչ թե միանգամից էր պետք հանրությանը ներկայացնել, այլ սկզբում մասնագիտական քննարկում անել: Այնուհետև աշխատանքային խումբն իր մոտեցումները (ոչ թե նախագիծը) ներկայացրել մասնագետների լայն շրջանակին և հետո միայն՝ հանրությանը: Ես համոզված եմ, որ աշխատանքային խումբը հետքայլ կանի:

Ալինա ԳՐԻԳՈՐՅԱՆ.

Կրթության համակարգում բարեփոխումները երբ կատարում են, փորձում են դրանք համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, և ամենակարևորը՝ կրթության որակի հարցն է դրված յուրաքանչյուր բարեփոխման մեջ: Թե ինչքանով դրանք կնպաստեն, ինչքանով բոլորս՝ ուսուցչական կազմը, աշակերտները, ծնողները, պետությունը, պատրաստ կլինենք իրականացնել, ակնկալում ենք դրականը, չնայած որ բացասականին էլ պիտի պատրաստ լինենք դիմագրավելու:

Գեղամուշ ԳՅԱԳՈՒՆՑ.

Չափորոշիչներն ավագ դպրոցի հիմնադրման օրից էապես չեն փոխվել: Պարզապես բառերն են փոխվել, ավելի գեղեցիկ, ճկուն խոսք է ներկայացվում: Մեր նպատակը պետք է լինի աշակերտին մոտիվացնելը՝ շահադրդելը: «Մոտիվացիա» բառը հիմա արդիական է, ու մեր խնդիրն է՝ ինչքանով կարելի է այդ չափորոշիչներով շահադրդել որակյալ և առողջ դատող սերունդ ունենալու համար: Բայց նյութատեխնիկական անհրաժեշտ բազա ունե՞նք, որպեսզի բնագիտական առարկաների չափորոշիչների պահանջներին համապատասխան ուսուցում իրականացնենք: Եթե հիմքը ճիշտ չէ, նրա վրա ոչ մի բան կառուցել հնարավոր չէ: Պետք է խոսքը համապատասխանի իրականությանը, խոսքով շատ բան կարող ենք ասել, բայց գործնականում կարող ենք իրականացնել: Բնագիտական առարկաների չափորոշիչներում էական տարբերություններ չեն տեսել, բացի նրանից, որ ավելի շատ պահանջ կա: Տեսականը և գործնականը պետք է միմյանց հետ աշխատեն զուգահեռ: Տեսական ցանկացած

ԸՆՆԱՐԿՈՒՄ

մացնում: Ու նաև այս հանրային քննարկում կոչվածը, որ նպատակ ուներ լսելու հանրության կարծիքը, ինչպես ծնողների, այնպես էլ հատկապես ուսուցիչների, իմ կարծիքով, ձևական բնույթ է կրում: Ինքս առաջին արձագանքողներից մեկն եմ եղել, և աշխատանքային խմբին նամակ եմ ուղարկել հայոց լեզվի և գրականության մասով: Արձագանքից հասկացա, որ բացարձակապես պատրաստ չեն համագործակցելու: Հատուկ էր ընտրված այդ ժամանակահատվածը: Ցավոք, հիմա հազար ու մի խնդիր ունենք: Մենք կարող էինք այս պահին չսկսել այդ ամենը, կարող էինք սպասել, որովհետև դա շատ կարևոր փաստաթուղթ է, քանի որ ազգային անվտանգության խնդիր է կրթության բովանդակությունը և չափորոշիչը մշակելը: Սա չպիտի լինի հապտապ, կարծես արագ-արագ արել են, այսպես կոչված քննարկումներ արել, որ մարդիկ խոսեն, նաև շատ դեպքերում ուսուցչին ոչ վայել բառապաշարով (եղել են նաև նման դեպքեր), ինչը մեզ պատիվ չի բերում, բայց փաստը մնում է փաստ, որ ինչքան էլ խոսենք, այն տպավորությունն է, որ կարծես դիմացը պատ է, չեն լսում, ու երբեմն թևաբափ են լինում: Այսօր հավաքվել ենք, դրա կարիքը կար, և ես ողջունում եմ այս նախաձեռնությունը, որովհետև Արցախիս իրոք անհրաժեշտ է նման կառույց: Թե չէ այն տպավորությունն է, թե կցորդ ենք: Մենք բարեփոխումների կարիք շատ ունենք, դժգոհ էինք նախկին չափորոշիչներին, դրանք շատ բարդ էին, և մենք սպասում էինք նորոշում: Բայց սա բարեփոխում չէ, սա հեղաշրջում է, ամեն ինչ խառնել են իրար: Քառասյուն վիճակ է ստեղծվում, այստեղ ես լույս չեմ տեսնում, ցավոք:



Այսօր հավաքվել ենք, դրա կարիքը կար, և ես ողջունում եմ այս նախաձեռնությունը, որովհետև Արցախիս իրոք անհրաժեշտ է նման կառույց: Թե չէ այն տպավորությունն է, թե կցորդ ենք: Մենք բարեփոխումների կարիք շատ ունենք, դժգոհ էինք նախկին չափորոշիչներին, դրանք շատ բարդ էին, և մենք սպասում էինք նորոշում: Բայց սա բարեփոխում չէ, սա հեղաշրջում է, ամեն ինչ խառնել են իրար: Քառասյուն վիճակ է ստեղծվում, այստեղ ես լույս չեմ տեսնում, ցավոք:

Պայանե Ծատրյան, աշակերտուհի.
- Աշխարհում տիրող իրավիճակը մարդկությանը նոր մարտահրավերների առաջ է կանգնեցնում: Ժամանակակից լինելու և արդիականությունը չկորցնելու համար անհրաժեշտ են փոփոխություններ բոլոր ոլորտներում:

21-րդ դարի դպրոցը պետք է համապատասխանի 21-րդ դարի աշակերտի հետաքրքրություններին: Ես ինքս դրական եմ գնահատում փոփոխությունների գաղափարը, սակայն կարծում եմ՝ այն չպետք է հարվածի հայապահպանության հիմնասյուններին՝ հայ գրականությանը, հայոց պատմությանը ու եկեղեցուն: Պատմությունը բազմիցս ապացուցել է, որ պետականություն չունենալու ժամանակ եկեղեցին միավորել է թե՛ լեզուն ու պատմությունը, թե՛ հայ մշակույթն ու հավատքը: Իմ կարծիքով, անընդունելի են բոլոր այն փոփոխությունները, որոնք պետք է կատարվեն ի հաշիվ հայագիտական առարկաների՝ կրճատելով կամ ձևափոխելով դրանք: Այս ամենը կարող է բացասաբար անդրադառնալ մեր ազգային ինքնատիպության, առանձնահատկության և մշակույթի վրա:

Աշակերտների մեծ մասը, այդ թվում և ես հաճույքով ընթերցում ենք արտասահմանյան գրականություն:

Կուզեի շեշտել՝ ես ապրում եմ հայկական երկրորդ հանրապետությունում, ես հայ եմ, հաճախում եմ հայկական դպրոց և ցանկանում եմ ուսումնասիրել հայ գրականություն:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ, աշակերտուհի
- Որպես աշակերտ, ում համար այս տարին վերջինն է դպրոցում, ուզում եմ ասել, որ գործող կրթական համակարգն, իհարկե, մի փոքր արդիական չէ, աշակերտները ևս փոքր արդիական փոփոխություններ կցանկանային տեսնել, սակայն այս տիպի հսկայածավալ փոփոխությունները շատ ռիսկային ու անընդունելի են. ոչ ոք չի կարող գուշակել՝ այս փոփոխություններն աշակերտի՞ որպես մարդ կայանալուն, երկրի տնտեսությանը, բնակչությանը թվաճին կանդրադառնան լավ, թե՞ վատ ձևով: Այդ, կրթական համակարգին փոփոխություններ պետք են, բայց դրանք պիտի արվեն շատ զգույշ, փոքր առ փոքր, և ճիշտ չէ փորձարկված ծրագիրը միանգամից ներդնել կրթական համակարգում՝ առանց հաշվի առնելու, որ աշակերտը երեխա է: Նախ կցանկանայի անդրադառնալ հանրակրթական մոր չափորոշում, ըստ իս, առկա դրական մասերին, կետերին, որոնք իսկապես կցանկանայի տեսնել մեր կրթական համակարգում և որոնց հետ համամիտ եմ:

Չափորոշում բավականին մեծ տեղ է հատկացված ստեղծագործական աշխատանքին, ինչի առկայությունը, կարծում եմ, գործող կրթական համակարգին չէր խանգարի:

Աշակերտը պիտի կարողանա.
- Վերլուծել ստեղծագործությունն ու տվյալ գրքի համար նոր շապիկ պատրաստել (9-րդ դասարան).

- գովազդել գիրքը, գովազդի հոլովակ պատրաստել նրա համար (10-րդ դասարան).
- բեմագիր գրել ու բեմադրել ստեղծագործությունը (11-րդ դասարան):

Նման աշխատանքներ կատարելով՝ աշակերտը կառնչվի տարբեր մասնագիտությունների և համապատասխան մասնագետների հետ, կպատրաստվի կյանքին և ավելի հստակ մասնագիտական կողմնորոշում կունենա:

Սրանք են չափորոշիչ այն կետերը, որոնք հավանեցի:

Բացասական կողմեր.
Ինչպե՞ս կարելի է ձուլել ու վերացնել այն առարկան, որը պատմում է մեզ դարեր շարունակ հայ պահած հավատի մասին: Զե՞ որ Հայաստանն առաջինը քրիստոնեությունն ընդունած երկիրն է: Դարեր շարունակ, անգամ երբ պետականություն չունեինք, եկեղեցին եղել ու պիտի շարունակի լինել բոլոր հայերին համախմբող ուժը: Կան ընտանիքներ, որտեղ ծնողները հավուր պատշաճի չեն անդրադառնում եկեղեցու ու կրոնի կարևորությանը: Հենց այդ բացը լրացնելու համար էլ կա ու պիտի լինի «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան: Եթե առարկան համվի կամ ձուլվի, ապա շատ հնարավոր է, որ տարիներ անց երկրում ունենանք այն պատկերը, որ հիմա կարող ենք տեսնել եվրոպական մի շարք երկրներում: Հակադրության համար ուզում եմ օրինակ բերել հարևան Թուրքիայի ժողովրդին, որոնք մինչև մագերի ծայրը ամուր կառչած են իրենց հավատին:

Գոհար ՄԱՍՏԱԿԱՆՅԱՆ, ծնող.

- Բոլորս էլ համամիտ ենք, որ կրթական համակարգում բարեփոխումները պետք են: Բայց սրանք բարեփոխումներ անվանել չեմ կարող, քանի որ բարեփոխումը պետք է ուղղված լինի դեպի բարին, իսկ այս ամենում դա չենք տեսնում: Կարծում եմ միջազգային փորձը, բայց դա պետք է կառուցված լինի ազգային հենքի վրա: Ինչո՞ւ ազգային հենքի վրա, քանի որ դպրոցը ոչ միայն գիտելիք փոխանցելու վայր է, այլ նաև դաստիարակելու: Բայց այն, ինչ մենք տեսնում ենք, ակունքից կտրելու քաղաքականություն է: Ես մի տեղ կարդացել եմ, որ երբ Նապոլեոն Բոնապարտը հանձնարարել է գրել Քաղաքացիական օրենսգիրք, այնտեղ ներառված էին Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ից հատվածներ: Իսկ մենք ինքնակամ հեռանում ենք մեր հոգևոր հարստությունից:

Հասմիկ ԱՂԱԲԵԿՅԱՆ, ծնող.

- Իմ երեխան 5-րդ դասարան է փոխադրվել: Բոլորիս հայտնի է, թե ծրագրերը որքան ծանրաբեռնված են, և բեռնաթափման կարիք կա, բայց դա չպետք է կատարվի ի վնաս մեր երեխաների հայեցի դաստիարակության: Բարեփոխումներից պետք է ստանանք «ինչո՞ւ», «ինչի՞ համար», «ի՞նչ ստանալ» հարցերի պատասխանները: Սովորողը մասնակցում է ուսումնառության պլանավորման և իրականացման գործընթացին, և նրա կարծիքի ու հետաքրքրությունների հիման վրա են կառուցվում ուսումնական նյութը, բովանդակությունը: Ինչպե՞ս կարող է ուսուցիչը համակարգել տարբեր կարծիքներն ուսումնառության բովանդակության վերաբերյալ:

Քննարկումները ծավալվելով՝ ընդգրկեցին նաև այլ թեմաներ՝ գնահատման համակարգ, «Հայոց եկեղեցու պատմություն», ավագ դպրոց, բուհ և այլն: Զգացվում է, որ տարբեր խնդիրների շուրջ մանկավարժները միմյանց հետ մտքեր փոխանակելու կարիք ունեն:

«ՆորԱրար»-ի համահիմնադիրներից Լ. Արահանյանն ասաց, որ իրենց դիտարկումները կներկայացվեն փորձագիտական խմբին, իսկ եզրափակելով՝ Մ. Բալայանն ասաց՝ հարկ է, որ Արցախում էլ մեկ դպրոց փորձական կարգով ընդգրկվի պիլոտային ծրագրի մեջ, քանի որ Արցախի ուսուցչական համայնքը ունի այն ներուժը, որը կկարողանա տեղայնացնել, փորձարկել և եզրահանգումներ կատարել:

«ԼՈՒՍԱՐԸ»

Շնորհավորանք

ՄԻՐԵԼԻ ՏՆՕՐԵՆԻՆ



Լրացավ Քարահունցի հիմնական դպրոցի տնօրեն Արթուր Լալայանի ծննդյան 50-ամյակը: Ամենադրական զգացումներն են միախառնվում, երբ խոսում կամ մտածում ենք այն մարդու մասին, որն իր օրինակով սովորեցրել է լավ սովորել, շատ աշխատել, ճիշտ ընկերություն անել, ճիշտ գնահատել ունեցածը: Ուրախ ենք, որ պատիվ ենք ունեցել աշխատել չափազանց բարի այդ անհատականության հետ: Արթուր Լալայանը նախ և առաջ ուսուցիչ է... Որքան իմաստություն, համբերություն, քնքշություն և սեր կա անփոփոխ այս բառում: Ուսուցիչը ծնողից հետո երկրորդ ամեն է, որն ուղղակիորեն ներգրավված է նոր մարդու դաստիարակության մեջ: Այդ բարու սերմնացանն է Արթուր Լալայանը:

Ծնվել է 1970թ. օգոստոսի 25-ին: 1977-1978 ուստարում սովորել է Քերթի միջնակարգ դպրոցում և գերազանց գնահատականներով ավարտել դպրոցը: Նա ոսկե մեդալակիր է: Ավարտելուց հետո ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Մաթեմատիկա և ֆիզիկա» բաժինը: 1991 թվականից Քարահունցի միջնակարգ դպրոցում աշխատել է որպես մաթեմատիկա և ֆիզիկա առարկաների ուսուցիչ: 1992-1993թթ.՝ նույն դպրոցում որպես կազմակերպիչ, ապա՝ տնօրեն առաջօր:

Արթուր Լալայանը մեծ հեղինակություն և հարգանք է վայելում ինչպես իր կոլեկտիվում, այնպես էլ հասարակության մեջ: Նրա մասին սիրով և հարգանքով են խոսում նախկին և ներկա աշակերտները: Չափազանց հանգիստ բնավորությամբ, քչախոս, միաժամանակ բարձր ինտելեկտի տեր անձնավորություն է:

Քարահունցի հիմնական դպրոցի կոլեկտիվը սրտանց շնորհավորում է սիրելի տնօրենի ծննդյան 50-ամյակը, մաղթում քաջառողջություն, ընտանեկան երջանկություն և հաջողություններ իր բոլոր նախաձեռնություններում:

Շնորհավոր ծնունդդ, հարգաբաժան տնօրեն:

Քարահունցի հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐ

20-րդ դարի արձանի ևսկզբին ՄԱՆԿԱՎԱՐԺԸ
Միքայել Առաքելյանի մահվան 30-րդ տարելիցի կապակցությամբ



«Ես կյանքում ամենից շատ ստեղծել էի թմրամիջոցներ, թմրամիջոցներ և առավել ևս՝ թմրամիջոցներ»:

Միքայել Առաքելյան

Մանկավարժը, որի մասին պատիվ ունեն խոսելու, սզնեցի «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ» մեծագույն կրթաման արժանացած Միքայել Առաքելյանն է: Կոչում, որ ձեռք է բերվել երկար տարիների նվիրված աշխատանքի շնորհիվ և արդարացի վաստակ է հայրենանվեր գործի: Ռուս մեծ գրող Լև Տոլստոյը մի առիթով ասել է. «Եթե ուսուցիչն իր մեջ զուգակցում է սերը գործի և աշակերտների նկատմամբ, նա կատարյալ ուսուցիչ է»:

Սզնեցի Միքայել Առաքելյանը լավագույն կարողացել է համադրել այս երկու կարևորագույն բաղադրիչները: Իմ նպատակն այստեղ ամենակին էլ կատարյալ մարդ ներկայացնելը է: Կատարյալ մարդ գործնականում չի լինում, եթե հաշվի առնենք այն փաստը, որ պատմության ու ժամանակների հազարամյա փորձը տվել է կատարելության ընդամենը մեկ հայտնի օրինակ, այն էլ՝ մարդ-աստվածային: Մարդկային էությունը թերևս սկի և սպիտակի արտացոլանք է, կշեռքի երկու նմանությունն էրկու կշեռքը, որոնք կշռում են մարդկային էությունը: Եվ կարևորն այստեղ այն է, որ մարդու հոգում և իր ապրած կյանքի ողջ համապատկերում սկի կողքին գերակշռի սպիտակը, խավարի կողքին՝ լույսը, մշուշոտի կողքին՝ արևը: Կարևորն այն է, որ կյանքի ընթացքում արված գործի որակական զանգվածը հավաքվի ու ամբողջանա կշեռքի այն նմանություն, որի վրա ոսկե տառերով գրված է՝ բարի անուն, պայծառ հիշատակ... Իսկ դա միայն ու միայն հնարավոր է մարդու նվիրումի, արած լավ գործի ու մարդկային լավագույն որակների շնորհիվ:

Միքայել Առաքելյանը բացառիկ ուսուցիչ ու մանկավարժի իր կերպարով իր հետևից թողեց հենց այդ լուսավոր հետադիմը: Ես իմ ժամանակակիցների ու հետնորդների հուշերում մնաց որպես բարի ու կարգապահ, նվիրված ու աշխատասեր մարդ և մանկավարժ: Նրա հիշատակը վառ մնաց թե՛ իր աշակերտների ու գործընկերների և թե՛ համագյուղացիների հուշերում:

Միքայել Բախշիի Առաքելյանը ծնվել է 1921թ. մարտի 10-ին Ասկերանի շրջանի Ներքին Ազնեք գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի 8-ամյա դպրոցում, այնուհետև ուսուցչ շարունակել Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցում: 1946թ. հեռակա ուսուցմամբ ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը՝ ստանալով պատմության ուսուցիչի որակավորում: Ազնեքի դպրոցում անցել է մանկավարժական աշխատանքի՝ դառնալով դպրոցի տնօրեն: Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցում և աշխատել է որպես դպրոցի տնօրեն: Իսկ սկսած 1958 թվականից՝ Ազնեքում էր և մինչև թոշակի անցնելը դպրոցի անփոխարինելի տնօրենն էր:

Մ. Առաքելյանը ընթերցասեր, խստապահանջ և միևնույն ժամանակ բավականին բարեհամբույր ուսուցիչ էր: Նա մշտապես համակարգում էր դպրոցում ուսուցումն արդյունավետ կազմակերպելու հետ կապված տա-

րաբնույթ հարցերը, եղել է ուսուցիչների կողքին, օգնել ու ուղղորդել նրանց հնարավոր խնդիրներ ծագելու դեպքում: Ընկեր Առաքելյանը, ինչպես սիրում էին դիմել նրան, միշտ օրինակ է ծառայել իր գործընկերների համար: Նա ամեն օր պիտի սովորեր ու ինքնակրթվեր, կատարելագործվեր ու գիտելիքների աշխարհում նոր հորիզոններ բացահայտեր՝ աշակերտներին խանդավառությամբ այդ հորիզոնները ցույց տալու ու սիրել տալու համար: Գրաշարի էր տիրապետում ոչ միայն պատմությանը, այլև հայոց լեզվին ու գրականությանը, մաթեմատիկային ու ֆիզիկային: Դա հաճախ պատճառ էր դառնում, որ մարդիկ շփոթեին, թե իրականում որ առարկայի մասնագետ է ընկեր Առաքելյանը: Նրա համար կարծես նշանաբան էր դարձել Լենինի հայտնի կարգախոսը՝ «Սովորել, սովորել, սովորել»: Եվ որքան էր մեծ գրքի ու կրթության նկատմամբ այս մարդու սերը, որ նա առիթը բաց չէր թողնում կրկնելու. «Կորած է այն օրը, երբ մարդ ոչինչ չի սովորում»: Նա ամենուրեք փորձեց արդիականացնել կրթությունը, նոր շունչ ու ավիշ ներարկել սովորելու լուրճին: Դեռևս տասնյակ տարիներ առաջ նա զգայական ներքնատեսության ուժով բոլորից շուտ որոպեց այն ճշմարտությունն ու կենսականորեն անհրաժեշտ գաղափարը, որ կրթությունը ռազմավարական դարձնելն ու անգրագիտության մասսայական վերացումը նոր հնարավորությունների ու համընդհանուր զարգացման դռներ է բացելու:

Ընկեր Առաքելյանն իր անմիջական նախաձեռնությունը 1949-ին դպրոց է կառուցել, որ սզնեցի աշակերտները հարմարավետ դպրոցական շենք ունենան, որ նյութական պայմանները ոչ մի կերպ չխտչեցնուեն ուսման գործին, որ Ազնեքի դպրոցական գանձը երբեք չլիք... Եիշտ է, երեխաների քանակի պատճառով դպրոցը շուտով փակվեց, հետո նորից բացվեց, բայց այստեղ կարևորն այն էր, որ սզնեցի աշակերտներին գոնե գյուղում կրթելու նյութական հիմքն ու անկյունաքարն այլևս դրված էին: 1958թ. Մ. Առաքելյանը կրկին Ազնեքում էր, հայրենի դպրոցի տնօրենն էր: Գաշտ ու համերաշխ ընտանիքի էր նման ուսուցչական կոլեկտիվն ընկեր Միշայի օրոք: Ուսուցիչներից յուրաքանչյուրը վստահ էր, որ ցանկացած, այդ թվում նաև՝ մեթոդական օգնություն ստանալու հարցով կարող է դիմել տնօրենին, և ամեն ինչ անմիջապես իր տեղը կընկնի:

Չայոց լեզվի մասնագետ Ռիտա Գասպարյանը, որը դասավանդում էր Ազնեքի դպրոցում, իր հուշերում պատմում է, որ մի անգամ հայոց լեզվի դասաժամին երեխաներին բառի սխալ բացատրություն տվեց: Ընկեր Առաքելյանը, որը դասավանդում էր իրականացնում, ընդհատեց նրան ու հարցրեց՝ արդյո՞ք հայոց լեզվի բացատրական բառարան ունի, որին հետևեց պատասխանը՝ ոչ: Այն ժամանակ, պատմում է Ռիտա Գասպարյանը, ուսումնառությունը Բաքվում դեռ նոր ավարտած՝ չէր կարողացել ձեռք բերել բառարան, քանի որ այդպիսի գրքեր չէին վաճառում: Եվ ընդամենը որոշ ժամանակ անց, երբ ընկեր Առաքելյանը մեկնեց Երևան, իր հետ բերեց հայոց լեզվի բացատրական բառարան ու նվիրեց Ռիտա Գասպարյանին: Ահա այսպիսի ուշադրություն ուսուցիչների նկատմամբ՝ մեկ առ մեկ:

Իսկ Միքայել Առաքելյանի աշակերտ, հետագայում նաև՝ գործընկեր ու իմ ուսուցիչ Շահեն Մարգարյանը պատմում է Կարմիր գյուղում պատահած մի դեպքի մասին, որը նույնքան ազդեցիկ է և բացահայտում է մանկավարժի բարոյական ու մասնագիտական նկարագիրը: Տեղի դպրոցում, ինչպես նշեցի, ընկեր Առաքելյանը տնօրեն էր, իսկ կինը՝ ժենյան, գրադարանավարուհի: Օրերից մի օր կինն աշխատանքից ուշանում է և գիտեր, որ անպայման արժանանալու է ամուսնու նախափոխքին: Քիչ հետո իր աշխատանքակից դուրս գալով՝ ընկեր Առաքելյանը բոլորի ներկայությամբ ընթերցում է նկատողության հրամանը և շեշտում, որ «տնօրենի կին» պաշտոն չկա և չպիտի լինի: Այ սա՛ է պատասխանատվության բարձրագույն աստիճանը, որը նույնությամբ օրինակ

պիտի ծառայի նաև մեր օրերում: Միքայել Առաքելյանը կոչումով, հոգով ու սրտով մանկավարժ էր: Պահպանվել են նրա օրագրերը, որոնցից բերում են երկու հատված. «Ես գտնում եմ, որ դպրոցն այն ժամանակ է դպրոց, երբ այնտեղ զլխավոր առարկան Մարդագիտությունն է, երբ աշխարհաճանաչումը սկսվում է մարդկային հոգու ճանաչումից, և այդ ճանաչման հիման վրա ձևավորվում են մարդու համոզմունքները: Ձեր սանիկներին դաստիարակեք այնպես, որ նրանց սրտերը մանկական տարիքից լուսավորվեն հոգու գեղեցկության պայծառ լույսով, և այդ ժամանակ նրանց սրտերը կլինեն մաքուր ու նուրբ, զգայուն, և ձեր սանիկի արարքներին պահապան կկանգնի խիղճը...»:

Ահա մեկ այլ փորձիկ հատված օրագրից. «Ուսուցիչը պետք է հարգի երեխայի անձը, սիրի նրան ու հարգի նրա չգիտենալը: Երբ ուսուցիչը ծաղրում կամ պատժում է երեխային այն բանի համար, որ նա չգիտի, այդ ժամանակ երեխայի մեջ մեռնում է հավատը և ուսուցիչ, և իր նկատմամբ...»:

Այս երկու հատվածներն էլ բավական են հաստատելու, որ Մ. Առաքելյանը իսկական մանկավարժ էր բառիս լայն իմաստով, հասկանալու համար, որ նա նաև հրաշալի հոգեբան էր և հիմնալի էր հասկանում աշակերտների հոգեբանությունը: Եվ պատահական չէ, որ նա արժանացել է իր ապրած դարի լավագույն մանկավարժի բարձր կոչմանը:

Եվ հավատարիմ իր համոզմունքներին՝ մանկավարժն անխնայ աշխատում էր՝ գիրքը, թուղթն ու գրիչը ձեռքին: Իսկ երբ աչքերը սկսում էին լարվել կարողույց ու մորմոքել, համում էր ակնոցը, ծալում ու դնում գրքի վրա, դուրս գալիս իր այգին ու գրույցի բռնվում մայր հողի հետ: Աշխատասեր էր, մշակում էր բանջարանոցը, գնում մեղվափեթակների մոտ, բացում կափարիչն ու երկի մտածում, որ իր գյուղը երանի մեղվափեթակի նման լիներ, որտեղ մեղուները մեկ ընտանիք են. մեղուն գիտի իր գործառնությունը, բոռը՝ իր, կարծես նրանցից յուրաքանչյուրի գոյությունն արդարացված է: Իսկ հայրենի գյուղը՝ Ազնեքը, դառնալիորեն դատարկվում էր իր աչքերի առաջ: Գյուղը մի այնպիսի փեթակի էր նմանվում, որի մեղուները թռչում էին հեռավոր ծաղկատաններ, նեկտար հավաքում ու կարծես մոռանում, որ հեռվում փեթակ են թողել, որ մեղուի գործը չի սիրում հապաղել:

Այսպես գյուղը սկսեց սպառել ու դատարկվել. սզնեցի դերձակները գնում էին քաղաք ու հետ չէին գալիս: 1923թ. հունիսից լույս տեսնող «Սովետական Դարաբաղ» թերթում (1989թ. հունվարի 12, հ. 10) տպագրված իր «Մանկունքաբեր գեղեցիկ կյանքի» հոդվածում Մ. Առաքելյանը գրում է. «Ցավալից այն է, որ նույնիսկ գյուղում ծնված ու մեծացած մարդկանցից շատերն էլ, տեղափոխվելով քաղաք, օտարանում են հողից, հայրենի գյուղից, հայրական օջախից: Այդ մասին է վկայում այն փաստը, որ մեր լեռնաշխարհի շատ գյուղերում առաջադր կան մեծ քանակությամբ դատարկ տներ: Այդպիսի լքված երկհարկանի հրաշալի առանձնատներ կան նաև իմ հայրենի գյուղում՝ Ազնեքում: Ես այդ տանտերերին շատ լավ եմ ճանաչում: Նրանք բոլորն էլ ջերմորեն սիրել են հայրենի հողը ու գյուղը: Սակայն բոլորիս էլ հայտնի պատճառներով հարկադրված են եղել արցունքը աչքերից փակել հայրական օջախի դռները և տեղափոխվել քաղաք՝ «մի կտոր հաց վաստակելու...»:

Երկար տարիներ հոսունություն էր տեղի ունենում գյուղից դեպի քաղաք, և դա մտահոգություն չէր պատճառում շատերին:

Ն ու յ յ ի ս կ ոմանք դա համարում էին օրինաչափ, առաջադի-

մական քայլ: Սակայն հիմա պարզորոշ երևում են դրա հետևանքները: Արդյունքը եղավ այն, որ այժմ մեր չքնաղ լեռնաստանի շատ գյուղերում դպրոցական զանգը չի հնչում, իսկ մի շարք գյուղեր էլ կանգնած են նույն վտանգի առաջ:

Մեր հիմնավորը ու գեղեցիկ բնություն ունեցող գյուղն էլ կործանման վտանգի եզրին է կանգնած այսօր: Այդ այն դեպքում, երբ մեր գյուղից Բաքվում բնակվում է 240, Գրոզնիում՝ 80, Ստեփանակերտում՝ 50 տնտեսություն: Ես գրուցել եմ շատերի հետ և ցանկացել եմ համոզել նրանց, որ վերադառնան հայրենի գյուղ, շենացնեն այն...»: Ահա այսպիսի խոր ցավ է ապրել Միքայել Առաքելյանը, երբ իր աչքերի առաջ իր ամբողջ հասակով կանգնել է դատարկ ու անմարդաբանակ, ավեր ու անայի գյուղի ուրվակները:

Խելագարվելու նման մի բան է, երբ գիտակցում ես, որ առավոտ կանուխ դպրոցական զանգը չի հնչելու: Այն նորից փակվում էր: Մի՞թե գյուղում կրկին տիրելու է այդ անծոված ու ավերակված լռությունը: Եվ ո՞ւմ մեղադրես: Մեղավոր են կարծես բոլորը՝ և՛ մարդիկ, և՛ կենսապայմանները, և՛ հանգամանքները...

Ընկեր Միշան այլևս ծերանում էր... Հիշողության թևով հաճախ էր գնում հետ՝ իր հայրենի դպրոցը, որին կից հողատարածքը վերածել էր պտղատու այգու ու ծաղկատանների: Եվ հիշում էր, թե ինչպես է սովորեցրել իր սաներին փխրեցնել ու խնամել ծառերը: Եվ երբ երեխաները ծուլանում էին մեծ տրամազով փորել բնամերձի բաժակը, վերցնում էր բահն ու ցույց տալիս՝ ինչպես պետք է գործը զլուխ բերել:

«- Ընկեր Առաքելյան, էդպես լավ միայն դու կարող ես անել: Դու արա՛ մենք նայենք»:

- Նայելով որ սովորվի, դասաթի շունը վաղուց դասաթ էր դարձել:

Ծիծաղում էին, տնօրենն էլ, երեխաներն էլ: (երկխոսությունը՝ արցախցի հայտնի գրող Մաքսիմ Գորկովի հայտնի «Ինչն մասին է լռում գանգը» ակնարկից):

Հիշում էր դպրոցը, իր աշակերտներին ու գործընկերներին, և երկի աչքից արցունք էր կաթում: Այնքան երազանքներ ուներ, որ կիսատ մնացին... Ուզում էր, որ թոնուսիկն սովորեր անզվերեն ու իր համար էլ թարգմանություններ կատարեր, որովհետև ինքն այդպես էլ չհասցրեց սովորել անգլերեն, ուզում էր գիրք գրել, մեկնել արտասահման...:

Ընկեր Միշա, երկի հիմա էլ, վերևից նայելով հայրենի գյուղի ու հարազատ դպրոցի, հոգի համակվում է անասելի ցավով, երկի նույն աղոթքն է շուրթիդ՝ միայն թե չդատարկվի Ազնեքը, միայն թե չլիք Ազնեքի դպրոցական զանգը...

Ես՝ որպես Ազնեքի միջնակարգ դպրոցի նախկին դպրոցական, որպես աշակերտ Կարեն Մարտիրոսյան, խոնարհվում եմ Ձեր պայծառ հիշատակի առջև, ընկեր Առաքելյան: Դուք ինձ չեք դասավանդել, բայց ես ասես ճանաչում եմ Ձեզ ու Ձեր աշակերտն եմ: Դուք իսկապես արժանի եք լինելու 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

Հավերժ հիշատակ վաստակաշատ ու նվիրյալ ուսուցիչ, որի մասնագիտական լավագույն ավանդույթները առաջ են տարել ու տանում են նրա շառավիղները:

Կարեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԱրՊՀ իրավագիտության բաժնի
ուսանող, Ազնեքի միջն. դպրոցի
շրջանավարդ

ՃԱՎԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Հարազատ՝ Ստեփանակերտի Ա.Ղուլյանի անվան հ. 2 դպրոցի ողջ ուսուցչական կազմը իր խորին ցավակցությունն է հայտնում Արցախի կրթության համակարգում երկար տարիների իր փորձն ու գիտելիքները ներդրած վաստակավոր մանկավարժ Գուրգեն Հայրապետյանի մահվան կապակցությամբ: Մեր խորին ցավակցությունը ընտանիքին, հարազատներին:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ
Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ
Ստեփանակերտ, Գ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրպարություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՄՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 7.09.2020թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ:

ԿԱՐԳ








ՄՇԱԿՈՒՅԹ



13 →




ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ




ՎԱՐՑԱԶԱՐ


















1

